

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/1

24 մարտի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ալիկ Հակոբյանի 09.03.2015 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 25.02.2015 թ-ի թիվ 5100938 ակտի դեմ:

Ա/Ձ Ալիկ Հակոբյանի գանգատում բերված փաստարկները.

2015 թ-ի փետրվարի 25-ին Նոր Նորքի ՀՏ աշխատակիցների կողմից Ա/Ձ Ալիկ Հակոբյանին պատկանող Նոր Նորքի 9-րդ գանգված, Վիլնյուսի 15 հասցեում գտնվող խանութում կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենայի կանոնների կիրառման ճշտության ստուգում:

Ստուգման ընթացքում հարկային տեսչության աշխատակիցների կողմից կազմվել է թիվ 5100938 ակտը, համաձայն որի հարկային տեսուչները 13.02.2015 թ-ին, ժամը 17:00-ին Նոր Նորքի 5-րդ գանգված 15 հասցեում գտնվող խանութից կատարել են հսկիչ գնում 1000 դրամի չափով, որի դիմաց վճարված գումարը հսկիչ-դրամարկղային մեքենայի անսարքության պատճառով չի մուտքագրվել հսկիչ-դրամարկղային մեքենա և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Նշված ակտի վերաբերյալ Ա/Ձ Ալիկ Հակոբյանը ներկայացնում է իր առարկությունները:

1. Ա/Ձ Ալիկ Հակոբյանը հայտնում է, որ իր խանութը չի գտնվում Նոր Նորքի 5 գանգված 15 հասցեում, ինչպես նշված է ակտում, այլ գտնվում է Նոր Նորքի 9-րդ գանգված, Վիլնյուսի 15 հասցեում:

2. Հարկային ծառայողների կողմից առևտուր կատարելու ընթացքում խանութում բացակայել է ինտերնետ կապը, որի պատճառով նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենայով հնարավոր չի եղել իրականացնել գործարքներ և տրամադրել ՀԴՄ կտրոնը, այլ ոչ թե ՀԴՄ կտրոնը չի տրամադրվել հսկիչ-դրամարկղային մեքենայի անսարքության պատճառով, ինչպես որ նշվել է ակտում:

Ելնելով վերը նշված հանգամանքներից՝ Ա/Ձ Ալիկ Հակոբյանը խնդրում է Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 25.02.2015 թ-ին կազմված թիվ 5100938 ակտը համարել չեղյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 09.02.2015 թ-ի թիվ 5100938 հանձնարարագրի Ա/Ձ Ալիկ Հակոբյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 25.02.2015 թ-ի թիվ 5100938 ակտը (այսուհետ նաև Ակտ): Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

ավագ հարկային տեսուչ Վահրամ Բաբայանի կողմից 13.02.2015 թ-ին, ժամը 17:00-ին ք.Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգված 15 հասցեում գտնվող խանութից կատարվել է հսկիչ գնում 1000 դրամի չափով՝ 1 հատ շամպուն, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ Ալիկ Հակոբյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել ՀԴՄ-ի անսարքության պատճառով: Ստուգումն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ կետի պահանջները: Համաձայն նույն կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի ՀԴՄ կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց, դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենք 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ակտում տեղ է գտել վրիպակ: Մասնավորապես, Ակտի 1-ին կետում նշված է, որ հսկիչ գնումը կատարվել է ք.Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգված 15 հասցեում գտնվող խանութից: Սակայն իրականում հսկիչ գնումը կատարվել է Նոր Նորքի 9-րդ զանգված, Վիլյուսի 15 հասցեում գտնվող խանութից:

Բացի այդ, Ակտում նշվել է, որ հսկիչ գնման դիմաց վճարված գումարը Ա/Ձ Ալիկ Հակոբյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել ՀԴՄ-ի անսարքության պատճառով: Սակայն իրականում հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքի դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու պատճառը հանդիսացել է ինտերնետային կապի խափանումը:

Տվյալ դեպքում հսկիչ գնման դիմաց վճարված գումարը Ա/Ձ Ալիկ Հակոբյանը փորձել է մուտքագրել ՀԴՄ, որը նոր սերնդի է, և տրամադրել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն, սակայն ինտերնետային կապի խափանման հետևանքով Ա/Ձ Ալիկ Հակոբյանի փորձերը եղել են ապարդյուն: Նշված հանգամանքը հիմնավորվում է նրանով, որ հսկիչ գնումից հետո ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք փորձել են ՀԴՄ-ից դուրս բերել ֆիսկալային Z հաշվետվություն, ինչպես նաև կատարել դրան հաջորդող համապատասխան գործողությունները, ինչը, սակայն, նրանց չի հաջողվել:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերաբերյալ ստուգման ընթացքում կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ակտով արձանագրված խախտումը Ա/Ձ Ալիկ Հակոբյանի կողմից թույլ է տրվել ոչ իր մեղքով, իր կամքից անկախ հանգամանքների բերումով:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն Ակտով արձանագրված խախտման

ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց: Սակայն տվյալ դեպքում, ինչպես որ վերը նշվել է, ստուգումն իրականացնող անձանց չի հաջողվել ձեռք բերել Ակտով արձանագրված խախտումը հիմնավորող համապատասխան ապացույցները:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ սույն գործում առկա փաստական հանգամանքների առկայության պայմաններում Ա/Ձ Ալիկ Հակոբյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 25.02.2015 թ-ի թիվ 5100938 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**